# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

---

ք. Երևան 20.06.2022թ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**

**թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/40**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Յասոն» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝

Ա. Մկրտչյանի և Լ. Թադևոսյանի (լիազորագրեր՝ տրված 14.06.2022թ.),

ՀՀ ֆինանսների նախարարության լիազորված ներկայացուցիչներ՝

Ա. Աղաբաբյանի և Լ. Սահակյանի (լիազորագիր՝ տրված 06.06.2022թ.),

քննելով ՀՀ ֆինանսների նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար գրասենյակային պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/5» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Յասոն» ՍՊԸ-ի կողմից 19.05.2022թ. ներկայացված (20.05.2022թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2022/40 բողոք), պարզեցի հետևյալը.

### 1. <u>«Յասոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Յասոն» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 19.05.2022թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստական հանգամանքները.

ՀՀ ֆինանսների նախարարությունի կարիքների համար՝ «գրասենյակային պարագաների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հայտերի բացումը եղել է www.eauction.armeps.am համակարգի միջոցով 28 ապրիլի 2022 թվականին ժամը 15:00-ին:

«ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ն ներկայացրել է ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ:

Համաձայն ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 28.04.2022թ. թիվ 2 արձանագրության 3-րդ կետի 1-ին ենթակետով արձանագրել է, որ «ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված լիազորագիրը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ 5-րդ կետի 2-րդ ենթակետով գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու նպատակով, որից հետո արձանագրության 6-րդ կետով նշանակել հաջորդ նիստի օրը 05.05.2022թ. ժամը 12:00-ին և 05.05.2022թ. թիվ 3 արձանագրությամբ «ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ի հայտը գնահատել է անբավարար, մերժել այն և 8-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած, չնայած այն բանին, որ 29.04.2022թ.-ին (Հրապարակված է 2022-04-29 15:38:38-ից անժամկետ) գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակված ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու մասին որոշման համաձայն ՝ 8-րդ չափաբաժնի համար «ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ն է նշվել և «ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ն էլ. փոստով 28.04.2022թ. պայմանագրի նախագիծ է (պայմանագիր կնքելու առաջարկ) ստացել, ապա պայմանագիրը տանելու ժամանակ տեղեկացել է, որ իր հայտը մերժված է:

Բողոքի իրավական հիմքերը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք)՝ մասնավորապես.

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա

ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշում-ները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները.

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ Կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

Բողոքի վերլուծությունը և պահանջը.

Այսպիսով, ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար՝ «գրասենյակային պարագաների» ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ծածկագրով գնման ընթացակարգի 29.04.2022թ. gnumner.am կայքում հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումը և «ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ն էլ. փոստին ստացված պայմանագրի նախագիծը (պայմանագիր կնքելու առաջարկ) «ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ին հիմքեր են տվել մտածելու, որ «ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և իր հետ 8-րդ չափաբաժնի համար պետք է կնքվի պայմանագիր, այն ինչ պայմանագիրը տանելու ժամանակ պարզվել է, որ իրականությունը այլ է՝ «ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Վերոնշյալով պայմանավորված՝ գտնում ենք, որ ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ծածկագրով գնման ընթացակարգի 29.04.2022թ. gnumner.am կայքում հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումը և «ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ն էլ. փոստին ստացված պայմանագրի նախագիծը (պայմանագիր կնքելու առաջարկ) «ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ին գցել են շփոթմունքի մեջ և ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է կրկին անցկացնի բացման և գնահատման նիստ(եր)՝ Օրենքի և Կարգի պահանջներին համապատասխան, քանի որ ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ծածկագրով գնման ընթացակարգի նիստը(եր) չեն համապատասխանում Օրենքի և Կարգի պահանջներին:

Ելնելով վորոգրյալից՝ «ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ն ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում է պարտավորեցնել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից գրասենյակային պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին.

Դադարեցնել հանձնաժողովի՝ 28.04.2022թ. թիվ 2 արձանագրության 3-րդ կետի 1-ին ենթակետի, 5-րդ կետի 2-րդ ենթակետի և 05.05.2022թ. թիվ 3 արձանագրության համաձայն ընդունված որոշումները:

Դադարեցնել հանձնաժողովի՝ www.gnumner.am կայքում 05.05.2022թ. հրապարակված ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ծածկագրով գնման ընթացակարգի 8-րդ չափաբաժինը չկայացած հայտարարելու մասին որոշումը»:

Ի լրումն բողոքի Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Հակիրճ նկարագրությունը և փաստական հանգամանքները.

«ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ն ներկայացրել է ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների մասով բողոք, որում ցանկանում է կատարել լրացում:

Պատվիրատուն 29.04.2022թ.-ին (Հրապարակված է 2022-04-29 15:38:38-ից անժամկետ) գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակել է ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու մասին որոշումը, որի համաձայն՝ 8-րդ չափաբաժնի համար «ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ն է նշվել ընտրված մասնակից և «ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ին էլ. փոստով 28.04.2022թ. պայմանագրի նախագիծ է (պայմանագիր կնքելու առաջարկ) ներկայացրել, ապա երբ «ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ն ցանկացել է իր իրավունքը իրացնել և պայմանագիրը կնքելու նպատակով սահմանված ժամկետում պատվիրատուին է ներկայացրել իր կողմից կնքված և ստորագրված պայմանագիրը՝ այն պատվիրատուի կողմից չի ընդունվել:

Կարևորում ենք նաև այն, որ 08.06.2022թ. ՍՑ-ՆԳ-2022/242 ընթացակարգի շրջանակներում հրավիրված նիստին պատվիրատուի ներկայացուցիչները բարձրաձայնեցին, որ պայմանագիր կնքելու մասին որոշումը հրապարակվել է, իսկ պայմանագրի նախագիծը ուղարկվել «ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ին, քանի որ սկզբում «ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ի հայտը գնահատել են բավարար և «ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ն 8-րդ չափաբաժնի մասով լինելով միակ մասնակից գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է ընտրված մասնակից:

Իրավական հիմքերը.

«ՀՀ քաղաքացիական օրենսգրքի» (այսուհետ՝ Օրենսգիրք)՝ մասնավորապես.

Օրենսգրքի 451-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. Օֆերտան մեկ կամ մի քանի կոնկրետ անձանց հասցեագրված առաջարկն է, որը որոշակիորեն արտահայտում է առաջարկողի մտադրությունը՝ պայմանագիրը կնքված համարել առաջարկն ընդունած հասցեատիրոջ հետ:

Օֆերտան պետք է պարունակի պայմանագրի էական պայմանները:

2. Օֆերտան կաշկանդում է ուղարկող անձին՝ այն հասցեատիրոջ կողմից ստանալու պահից:

Եթե օֆերտայի հետկանչի մասին ծանուցումն ստացվել է օֆերտան ստանալուց առաջ կամ դրա հետ միաժամանակ, ապա օֆերտան համարվում է չուղարկված:

Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով պայմանագիր կնքելիս օֆերտան համարվում է ստացված այն պահից, երբ այն մուտք է գործում հասցեատիրոջ կողմից նշված տեղեկատվական համակարգ, կամ հայտնաբերել է հասցեատերը, եթե այն ուղարկվել է նրա կողմից չնշված տեղեկատվական համակարգին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք)՝ մասնավորապես.

Օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝

1. Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված հայտարարությունն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին՝ ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

2. Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

3. Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

5. Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձի [հետ] չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

6. Գնման հետ կապված կողմերի՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են պայմանագրով:

Օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Պատվիրատուն, սույն օրենքով սահմանված կարգով, պայմանագիրը կնքում է էլեկտրոնային աճուրդի արդյունքների հիման վրա՝ ընտրված մասնակցի հետ:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ Կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

Վերլուծությունը և պահանջը.

Այսպիսով, ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար՝ «գրասենյակային պարագաների» ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ծածկագրով գնման ընթացակարգի 29.04.2022թ. gnumner.am կայքում հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումը և «ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ի էլ. փոստին ստացված պայմանագրի նախագիծը (պայմանագիր կնքելու առաջարկ) «ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ին հիմքեր են տվել իր կողմից կնքված պայմանագիրը պատվիրատուին ներկայացնելու, սակայն այդ իրավունքը չի իրացվել պատվիրատուի գործողությունների պատճառով, այն ինչ «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի» հաձայն օֆերտան անհետկանչելի է:

Վերոնշյալով պայմանավորված՝ գտնում ենք, որ ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ի հետ պետք է կնքվեր՝ ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ծածկագրով գնման ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով, պայմանագիր:

Ելնելով վորոգրյալից՝ «ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ն ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում է պարտավորեցնել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից գրասենյակային պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման

ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով «ՅԱՍՈՆ» ՍՊԸ-ի հետ կնքել պայմանագիր կամ տալ պայմանագիր կնքելու հնարավորություն»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 15.06.2022թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքը:

**2. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ԳԲՔԱ-ՆԳ-2022/40 բողոքի շրջանակներում գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացվել է բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 15.06.2022թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը:

**3. <u>ԳԲՔԱ-ՆԳ-2022/40 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**

ԳԲՔԱ-ՆԳ-2022/40 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/5» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցության հայտ է ներկայացրել «Յասոն» ՍՊԸ-ն:
2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.04.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Յասոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված լիազորագիրը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:
3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն

առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.05.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Յասոն» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել էլ. թվային ստորագրությամբ հաստատված լիազորագիրը և որոշում կայացրել Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

**4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Յասոն» ՍՊԸ-ի 19.05.2022թ. բողոքը՝ կից լրացմամբ և փաստաթղթերով, ԳԲՔԱ-ՆԳ-2022/40 բողոքի շրջանակներում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: ***<u>Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ</u>***, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը

կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.11 ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ***<u>ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ,</u>*** հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, ներառյալ եթե սույն հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել դրա բնօրինակը, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Նույն կետի 8.19 ենթակետի համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը իր կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում և ներկայացնում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում: Այն դեպքում երբ, մասնակիցը ներկայացնում է իր կողմից չհաստատվող տեղեկություն, ապա փաստաթղթերն ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակով:

***<u>Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ,</u>*** իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակով:

Հայտում ներառվող՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվող փաստաթղթերը չեն կնքվում:

Այսպես, ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/5» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցության հայտ է ներկայացրել «Յասոն» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.04.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Յասոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված լիազորագիրը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.05.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Յասոն» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել էլեկտրոնային թվային

ստորագրությամբ հաստատված լիազորագիրը և որոշում կայացրել Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետով սահմանվում է, որ ***եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է***:

Սույն գործի փաստերի համաձայն՝ արձանագրում եմ, որ «Յասոն» ՍՊԸ-ին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից ներկայացվել է անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ ծանուցում: Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով և ժամկետում Ընկերությունը ներկայացրել է շտկման ենթակա փաստաթուղթը, որը կրկին հաստատված չի եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ, այսինքն՝ սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը, որպիսի պայմաններում գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով Ընկերության հայտը, գործել է Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջի համաձայն, հետևաբար գտնում եմ, որ բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

Միևնույն ժամանակ, անդրադառնալով Ընկերության կողմից բողոքով ներկայացված հիմնավորումներին և փաստարկներին, հարկ եմ համարում արձանագրել, որ դրանք չեն արտահայտում Ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից իրականացված գործողությունները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

# ՈՐՈՇԵՑԻ

«Յասոն» ՍՊԸ-ի կողմից 19.05.2022թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**